ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 54

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի պահանջով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 22 դեկտեմբերի 2016թվականի թիվ 11 նիստի օրակարգը

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Արենի համայնքի 2016թվականի տարեկան բյուջեի հողի օտարումից մուտքեր եկամտային մասում ավելացում կատարելու մասին
3. Արենի համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
6. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 55-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍԻ ՀՈՂԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի բ/ենթակետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արենի համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում՝ հողի օտարումից մուտքեր եկամտատեսակում ավելացնել 1 472 046 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուներկու հազար քառասունվեց) ՀՀ դրամ:
2. Ծախսային մասը ավելացնել. ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 1 472 046 (մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուներկու հազար քառասունվեց) ՀՀ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
6. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 56-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է՝

Հաստատել Արենի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՐԵՄՅԱՆ ՆԱԻՐԻ
2. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
6. ՍԻՄՈՆՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖՖԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Արենի համայնքի ավագանու
22.դեկտեմբերի.2016թ.-ի թիվ 56-Ն որոշման

## Բովանդակություն


1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ..... 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ..... 4
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն ..... 4
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ..... 5
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ..... 6
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները ..... 7
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... 8
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն ..... 9
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում ..... 10
   3.1. Համայնքի զարգացման տեսլական ..... 11
4. ՀԶԾ ֆինանսավորում ..... 12

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Արենին հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, գեղատեսիլ բնությամբ, խաղողագործության և գինեգործության հարուստ ավանդույթներով, հյուրընկալ և աշխատասեր ժողովրդով համայնք է: Համայնքն ունի զարգացման ահռելի, դեռևս չօգտագործված ներուժ: Զարգացման արդյունավետ պլանավորման դեպքում համայնքն ունի հանրապետությունում և տարածաշրջանում գինեգործության և զբոսաշրջության առաջատար կենտրոն դառնալու հեռանկար: Համայնքում և դրա շրջակայքում առկա զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջային գրավչության օբյեկտները, գինեգործության հազարամյա ավանդույթները և համայնքի բնակիչների ավանդական հյուրընկալությունն ու հյուրասիրությունն անփոխարինելի գրավականն են համայնքի հետագա զարգացման և բարգավաճման: Սույն ծրագիրը մշակվել է վերոնշյալ ռեսուրսների հիման վրա՝ համայնքի զարգացման ճանապարհը հստակեցնելու նպատակով: Այն ներկայացնում է համայնքի զարգացման տեսլականը, վեր հանում առկա հիմնական խնդիրները և առաջարկում դրանց լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրեր՝ զարգացման ուղություններով: Ծրագրերի իրականացման համար լուրջ տեղ են զբաղեցնելու ինչպես համայնքի բնակչությունը այնպես էլ գործարար միջավայրը:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

- Արենի համայնքը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝ Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմերում, զբաղեցնում է 4359.52հա տարածք:

- ՀՍՍՀ Գերագույն սովետի 10/9 1946թ. Հրամանագրով Արփան վերանվանվել է Արենի: Արենի բնակավայրը Երևանից հեռու է 110 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 20 կմ: Համայնքը ծովի մակարդակից բարձր է 980 մ: Բնակավայրի տարածքը հիմնականում ընկած է Արփա գետի հովտի լայնացած մասում և ավտոխճուղու երկարությամբ զարգանում է դեպի հյուսիս և արևելք: Գյուղի եզրերը աստիճանաբար բարձրացել են դեպի գետահովտի զառիթափ լանջերը: Էկոլոգիական վիճակի սրություն բնակավայրում չկա, քանի որ չկան արդյունաբերական վտանգավոր օբյեկտներ և արտադրական համալիրներ: 2016 թվականի դրությամբ համայնքն ունի 520տնային տնտեսություն, 1968 բնակիչ, որից իգական՝ 973: Գյուղը թաղված է թթաստանների և մրգատու այգիների մեջ: Տների ճնշող մեծամասնությունը տանիքավոր է և հարմարավետ :

- Գյուղի կլիման ցամաքային է, բայց գետից հանված ջրով գրեթե ամբողջ հողատարածքը ոռոգվում է : Ձմեռը չափավոր ցուրտ է, ոչ երկարատև, գարունը տաք է՝ երկարատև, խոնավ, ամառը շոգ, չոր ու երկարատև է: Գերակշռում են հաստատուն պարզ եղանակները, աշունը տաք է, օրերը՝ քիչ ամպամած:

- Արենիի համայնքը էլեկտրաֆիկացված է, ապահովված է տրանսպորտային ցանցով, հեռախոսակապով, խմելու ջրի և ոռոգման ջրագծերով:

- *Ստորև ներկայացնում ենք բնակչության սեռատարիքային սանդղակը:*



## 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- *Համայնքի 2016թվականի տարեկան բյուջեն կազմում է 44002.4հազար ՀՀ դրամ,*
- *Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը՝ 21.73%,*
- *Համայնքում գործում է 3 գինու գործարան, որոնց արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում: Արտադրանքի որոշ խմբաքանակներ արտահանվում են նաև Ռուսաստանի դաշնություն: Համայնքի տարածքում գործում է նաև 2 տրավերտինի հանքավայր: Արդյունահանված քարը սպառվում է ներքին շուկայում:*

  - *Բնակչությունն զբաղված է այգեգործությամբ, դաշտավարությամբ, մեղվապահությամբ, թռչնաբուծությամբ և անասնապահությամբ: Համայնքի զարգացման գերակա ուղղություններից է խաղողագործությունը, գինեգործությունը և զբոսաշրջությունը, ինչպես նաև զարգացող պտղաբուծությունը, որի շնորհիվ համայնքում համեմատականորեն բարձր է բնակչության զբաղվածությունը, որը էականորեն նպաստում է արտագաղթի կանխմանը:*

- *Արենին ունի զբոսաշրջության մեծ պաշար՝ պատմամշակութային բազմաբնույթ բարձրարժեք հուշարձաններ: Համայնքի վարչական տարածքում է գտնվում միջազգային նշանակության հուշարձան Նորավանքի համալիրը, սրբ. Աստվածածին եկեղեցին, Արենի-1 քարանձավը: Բազմաթիվ են նաև բնության հուշարձանները՝ ժայռեր, ջրվեժներ, անդնդախորը ձորեր:*
- *Համայնքը ունի մեկ միջնակարգ դպրոց, որին կից գործում է նաև նախակրթարանը: Դպրոցը նախատեսված է 200 աշակերտի համար: Համայնքի մշակույթի տանը գործում է Եղեգնաձորի երաժշտական դպրոցի մասնաճյուղը և պարի խմբակը:*
- *Համայնքում է գտնվում Արենիի ԱԱՊԿ-ն որը սպասարկում է հարակից 5 գյուղերի բնակչությանը, մոտավորապես 5000մարդ:*
- *Ընտանեկան նպաստի համակարգում գրանցված է 46 ընտանիք,*
- *Սոցիալական նպաստի համակարգում գրանցված է 11 ընտանիք,*

## 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- *Համայնքի վարչական տարածքում պետության կողմից նախատեսվում է իրականացնել զբոսաշրջության զարգացման ծրագիրը: Ծրագրի նպատակն է խթանել ինչպես համայնքում այնպես էլ ողջ տարածաշրջանում զբոսաշրջության զարգացումը: Նախատեսվում է կառուցել ինֆորմացիոն խոշոր կենտրոն: Ծրագրի իրականացման դեպքում կստեղծվեն նոր աշխատատեղեր կզարգանա զբոսաշրջությունը, ինչ էական ազդեցություն կունենա համայնքի հետագա զարգացման համար: Կբարելավվեն ենթակառուցվածքները, բնակչության շրջանում կմեծանա ակտիվությունը, կավելանա հետաքրքրությունը դեպի զբոսաշրջային բիզնեսը: Հարևան համայնքների և վայրի բնության պահպանման համաշխարհային հիմնադրամի հետ համատեղ նախատեսվում է ստեղծել տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածք: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, ավելի մեծ ուշադրություն կդարձվի վայրի բնաության և մշակութային արժեքների պահպանմանը համայնքի տարածքում:*
- *Ընթացիկ տարում նախատեսվում է համագործակցել Ֆրանսիայի հանրապետության* Պրովանս-Ալպ-Կոդ դ՝Ազյուր շրջանի Վար դեպարտամենտի Բանդոլ քաղաքի հետ: Համագործակցության շրջանակներում կքնքվի երկու համայնքների քույրացման հուշագիր,: Բանդոլ քաղաքի գլխավոր մուտքի հրապարակում կտեղադրվի հուշաքար-կոթող ի նշան երկու ժողովուրդների դարավոր բարեկամության և Արենի- Բանդոլ համայնքների քույրացման: Համագործակցության շրջանակներում կանխատեսվում է զբոսաշրջության աճ երկու համայնքների միջև:
- *Քանի որ Արենի համայնքը նախկին խորհրդային միության բնակավայրերից այն եզակի համայնքներից է որը ունեցել է տասնմեկ սոցիալիստական աշխատանքի հերոս, ի նշան երախտագիտության նախատեսվում է տեղացի և արտասահմանյան բարերարների հետ համատեղ համայնքի գլխավոր հրապարակում կառուցել պուրակ, որտեղ կտեղադրվի հերոսներին նվիրված հուշակոթող: Ծրագրի նախագիծը և նախահաշիվը արդեն արված է, որը կազմում է մոտ 20 մլն ՀՀ դրամ: Կանխատեսվում է, որ ծրագրի իրականացման արդյունքում խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացման համար:*
- *Համայնքի վարչական տարածքում <<Թուֆենկյան հոսպիթալիթի>> ընկերության կողմից կառուցվում է հյուրանոցային համալիր: Համալիրի շինարարությունը ներկայումս դադարեցված է, բայց համայնքապետարանը կանի հնարավոր ամեն բան շինարարությունը հետագա տարիներին ավարտին հասցնելու համար: Հյուրանոցի կառուցումը մեծ խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացման համար, ինչպես նաև կբացվեն նոր աշխատատեղեր:*
- *Համայնքի տարածքում Նորավանքի կիրճի մուտքի մոտ կառուցվում է ձկնաբուծարան և տուրիզմի կենտրոն: Ներդրումների չափը կազմում է 200միլիոն դրամ և ավել: Շինարարությունը գտնվում է ընթացքի մեջ և նախատեսվում է ավարտին հացնել 2017թվականին: Ծրագրի ավարտից հետո կունենանք զարգացած սպասարկման կենտրոն, և լրացուցիչ աշխատատեղեր:*
- *Համայնքի տարածքում կան նաև փոքր անհատ ներդրողներ, որոնք ցանկանում են զարգացնել տնային տուրիզմը և ավանդական գինեգործությունը: Ներկայումս կան մի քանի անհատներ որոնք զբաղվում են տնային տուրիզմով, բայց ոլորտը հետագա զարգացման մեծ հեռանկարներ և ներուժ ունի: Համայնքի ղեկավարության կողմից կարվի ամեն ինչ նշված փոքր ձեռնարկատերերին օգնություն և աջակցություն ցուցաբերելու համար: Ծրագիրը հնարավորություն կտա զարգացնելու թե զբոսաշրջությունը թե գյուղատնտեսությունը: Անհատ ֆերմերները և այգեգործները հնարավորություն կստանան տեղում իրացնել իրենց արտադրանքը:*

## 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունն և ֆինանսական կանխատեսումները

*Համայնքի բյուջեի եկամուտները* *Հազար դրամ*

| հ/հ | Եկամուտներ | 2015թ.ի տարվա պլանը | Փաստացի կատարումը | Կատարման տոկոսը | 2016թ.-ի տարվա պլանը | Փաստացի կատարումը 12.12.2016թ. դրությամբ | Կանխատեսվող ցուցանիշ | Պլանային Մուտքերի աճը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ | 3800 | 4757 | 125.2 | 4400 | 4046.4 | 4800 | 1000 |
| 2 | Հողի հարկ | 2402 | 2423.6 | 100.9 | 2412 | 2417.8 | 2450 | 48 |
| 3 | Հողի վարձավճար | 1400 | 1266.2 | 90.4 | 1400 | 1080.25 | 1400 | |
| 4 | Տեղական տուրք | 350 | 666.4 | 190.4 | 500 | 894.27 | 950 | 600 |
| 5 | Օրենքով սահմանված այլ ոչ հարկային եկամուտներ | 850 | 1888.5 | 222.2 | 850 | 1435 | 1550 | |
| 6 | Դոտացիա | 31920.3 | 31920.3 | 100 | 34442.4 | 31572.2 | 34442.4 | 2522.1 |

*Համայնքի բյուջեի ծախսերը* *Հազար դրամ*

| հ/հ | Ծախսատեսակներ | 2015թ.ի տարվա պլանը | Փաստացի կատարումը | Կատարման տոկոսը | 2016թ.-ի տարվա պլանը | Փաստացի կատարումը 12.12..2016թ. դրությամբ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | աշխատավարձեր | 20500 | 20372 | 99.3 | 21233 | 19667 |
| 2 | Էներգետիկ ծառայություններ | 1400 | 1286.3 | 91.8 | 1878.2 | 1675 |
| 3 | Կոմունալ ծառայություններ | 6300 | 5266.6 | 98.5 | 5453 | 5372 |
| 4 | Կապի ծառայություններ | 260 | 255.1 | 98.1 | 305 | 278.7 |
| 5 | Գործուղումներ | 50 | 26.8 | 53.6 | 51 | 50.2 |
| 6 | Պայմանագրային ծառայություններ | 400 | 314.6 | 78.6 | 360 | 295 |
| 7 | Դրամաշնորհներ | 5783 | 5779.6 | 99.9 | 5282 | 5193.3 |
| 8 | Շենքերի ր շինությունների կապիտալ վերանորոգում | 7887.4 | 7880 | 99.9 | 7673.274 | 7673 |
| 9 | Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 350 | 330 | 94.3 | 265 | 94.3 |

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

- Զեռնարկատիրության զարգացմանը լուրջ խոչընդոտ է հանդիսանում Երևան-Մեղրի միջպետական ճանապարհի վրա շինարարության արգելումը և համայնքային սեփականություն հանդիսացող կառուցապատման հողերի բացակայությունը:
- Համայնքի անշարժ գույքի մասնավորապես գյուղատնտեսական նշանակության հողամասերը կառուցպատման նպատակով տրամադրելիս լուրջ խոչընդոտ է հանդիսանում հողամասի նպատակային նշանակության փոփոխության հարցը:
- Համայնքի կարևորագույն խնդիրներից է մանկապարտեզի բացակայությունը, որի համար համայնքապետարանի կողմից արվել է հնարավոր ամեն ինչ, բայց մինչ օրս խնդիրը լուծում չի ստացել: 70-ից ավելի երեխաներ հնարավորություն չունեն մանկապարտեզ հաճախելու, ինչի արդյունքում երիտասարդ ծնողները հնարավորություն չունեն աշխատելու:
- Մշակութային և մարզական միջոցառումների կազմակերպման գործում լուրջ խնդիր է ջեռուցման բացակայությունը համայնքի մշակույթի տանը և մարզադահլիճում: Հարցը կարող է լուծում ստանա համայնքը գազաֆիկացնելու դեպքում:
- Համայնքի բնակչության համար լուրջ խնդիր է հանդիսանում մարզային առողջապահական հիմնարկների անբավարար և ոչ մասնագիտացված վիճակը, տարրական հիվանդանոցային և գործիքախտորոշիչ պայմանների բացակայությունը: Բնակչության համար սոցիալական ավելորդ բեռ է հանդիսանում բժշկական սպասարկման համար ամեն անգամ մայրաքաղաք Երևան այցելելը:
- Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտում լուրջ խնդիր է հանդիսանում աղբատար մեքենայի բացակայությունը, աղբավայրի ոչ պատշաճ վիճակը, խմելու ջրագծերի արտքաին ցանցերի և կապտաժների անբավարար վիճակը, բնակչության կողմից չնախատեսված վայրերում աղբ թափելը: Կանաչապատման համար լուրջ խնդիր է ոռոգման ջրի բացակայությունը համապատասխան վայրերում:
- Համայնքային և հանդամիջյան ճանապարների անբարեկարգ վիճակը:
- Բնակչության քաղաքցիական պաշտպանության բնագավառում. որոշ թաղամասերում լուրջ խնդիր է պատսպարման խնդիրը, Արփա գետի ափամերձ հողամասերի անպաշտպան վիճակը, համայնքի տարածքում հրշեջ փրկարարական ջոկատի և մեքենայի բացակայությունը:
- Գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտում են բնակլիմայական պայմանները, իրացման խնդիրները, շուկայի անկայուն վիճակը, թունաքիմիկատների և պարարտանյութերի անորակ և թանկ լինելը, ամբավարար ոռոգման ջուրը:
- Համայնքում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտում են , բնակչության պասիվ մասնակցությունը, անբարեկարգ ճանապարհները:
- Համայնքում ծնելիության լուրջ խոչընդոտ է հանդիսանում մանկապարտեզի բացակայությունը:
- Համայնքի մայթերը, մշակույթի տունը, դպրոցը և այլ ենթակառուցվածքները ապահովված չեն թեքահարթակներով, ինչը խոչընդոտ է հանդիսանում հաշմանդամների մասնակցությանը համայնքի հասարակական կյանքին:

## 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

*Համայնքի ուժեղ կողմերը*

- *Գյուղտնտեսության համար բարենպաստ կլիմայական պայմաններ*
- *Խաղողագործության զարգացած ավանդույթներ*
- *Խաղողի այգիների առատություն*
- *Գինեգործությամբ հայտնի համայնք*
- *Համայնքի անվան և միջազգային շուկայում հայտնի հայկական <<Արենի>> գինու անվան նույնությամբ*
- *Բարենպաստ աշխարհագրական դիրք*
- *Արփա գետի առկայությունը*
- *Երևան-Մեղրի միջպետական մայրուղու վրա գտնվելը*
- *Նորավանքի համալիրի, Արենի-1 քարայրի, սրբ.Աստվածածին եկեղեցու և այլ պատմամշակութային արժեքների առկայությունը*
- *Գինու գործարանների առկայությունը*
- *Արտագաղթի ցածր տոկոս*
- *Ծնելիության համեմատաբար բարձր ցուցանիշ*
- *Զարգացած ենթակառուցվածքներ*
- *Գինու փառատոնի ամենամյա կազմակերպումը և անցկացումը*
- *Մշակութային նյութական և ոչ նյութական հարուստ ժառանգություն*
- *Էլեկտրաֆիկացի համայնքի ողջ տարածքում*
- *Ինտերնետ կապի և հեռախոսակապի առկայություն*
- *Գործող բուժ.ամբուլատորիա*
- *Աղբահանության գործող համակարգ*
- *Հյուրընկալ ժողովուրդ*

*Համայնքի թույլ կողմերը*

- *Մանկապարտեզի բացակայությունը*
- *Հանրակրթական դպրոցի շենքային վատ պայմանները*
- *Հանդամիջյան անբարեկարգ ճանապարհները*
- *Բնական գազի բացակայությունը*
- *Ջրահեռացման համակարգի և կոյուղու բացակայությունը*
- *Աղբամանների բացակայություն*
- *Գյուղմթերքի իրացման խնդիրները*
- *Գյուղատնտեսության մեխանիզացիայի անբավարար վիճակ*
- *Տնական արտադրության գինու փաթեթավորման ցածր որակ*
- *Տնական գինու վաճառքի վատ պայմաններ*
- *Այցելուների և զբոսաշրջիկների ժամանցի համար գրավիչ միջոցառումների, ժամանցի վայրերի բացակայություն*
- *Զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնի բացակայություն*
- *Որակյալ ուղեկցորդների պակաս*
- *Սպասարկման ոլորտում օտար լեզվի իմացությամբ որակյալ կադրերի պակաս*

*Համայնքի հնարավորությունները*

- *Գինեգործության զարգացում*
- *Խաղողի և գինու զբոսաշրջության զարգացման հիանալի նախադրյալներ*
- *Տնական գինու արտադրության և իրացման ծավալների ընդլայնում*
- *Խաղողագործության և գինեգործության թանգարանի հիմնում*
- *Երիտասարդների և զբոսաշրջիկների համար մշակութային և սպորտային ժամանցի վայրերի ստեղծում*
- *Վերամշակող գործարանների արդիականացում, հզորացում և նորերի ներգրավվում*
- *Գազաֆիկացում*
- *Կոյուղու և ջրահեռցման համակարգի կառուցում*
- *Կանաչապատ տարածքների ստեղծում*
- *Համայնքի կենտրոնական և ամենագեղատեսիլ մասերում ավանդական գյուղական գրավիչ միջավայրի վերականգնում*
- *Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ստեղծում*
- *Գյուղատնտեսության մեխանիզացիա*
- *Գյուղմթերքների արտադրման ծավալների ավելացում*
- *Գյուղատնտեսության զբոսաշրջության զարգացում*

*Համայնքի սպառնալիքները*

- *Սահմանամերձ գոտում գտնվելը*
- *<<Արենի>> բրենդի արդիականության պահպանումը*
- *Պատերազմի վերսկսման վտանգի հետ կապված զբոսաշրջիկների այցելությունների կրճատում*
- *Բնության կողմից պատճառված վնասները (կարկուտ, ցրտահարություն, երաշտ, երկրաշարժ, հեղեղումներ և այլն)*
- *Համայնքի բնակչության թերահավատությունը գյուղատնտեսական գործունեության շահավետության նկատմամբ*
- *Արտագաղթի վտանգ*

## 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1. Համայնքի զարգացման տեսլական

*Արենի համայնքը ներքին և միջազգային զբոսաշրջային շուկաներում տարեցտարի ամրապնդում է իր դիրքը՝ որպես գրավիչ զբոսավայր: Համայնքի զարգացմանը և հանրաճանաչմանը զուգահեռ՝ համայնքում ակնկալվում է զբոսաշրջային հոսքերի կտրուկ աճ, իսկ համայնքում իրականացվելիք զբոսարշջության զարգացման և գինեգործության զարգացման ծրագրերի արդյունքում կձևավորվեն նոր զբոսաշրջային գրավչության օբյեկտներ, ծառայություններն ու արդյունքները կխթանեն համայնքում զիշերակացների քանակի աճին: Զարգացման նման տեմպերում արդիական կդառնա համայնքը հյուրանոցային տնտեսության օբյեկտներով ապահովելու խնդիրը: Արենի համայնքում զբոսաշրջային տների զարգացման ծրագրի հիմնական նպատակն է համայնքում զբոսաշրջային տների զարգացման միջոցով համայնքն ապահովել հյուրանոցային տնտեսության օբյեկտներով, իսկ համայնքի բնակչության համար ստեղծել եկամտի հավելյալ աղբյուրներ՝ բարելավելով համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը: Արդյունքում ստեղծել համայնքի զբոսաշրջային տների ցանց և ինտեգրել այն հայկական և միջազգային շուկայում, ապահովել զբոսաշրջային տների բակերի, տնամերձ այգիների և ինտերիերի հայկական ավանդական գյուղական ձևավորումն ու կահավորումը, զբոսաշրջային տներում ապահովել անհրաժեշտ տարրական սանիտարական պայմաններ, ապահովել սերտ և արդյունավետ համագործակցություն զբոսաշրջային տների, գինեգործական ընկերությունների, գյուղատնտեսական ընկերությունների, զբոսաշրջային ծառայություններ մատուցող օբյեկտների, համայնքի արհեստավորների, մանկապատանեական ու երիտասարդական մշակութային խմբակների և ուսանողների միջև: Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները՝*

| *հ/հ* | *Զարգացման ցուցանիշը* | *Ըստ տարիների արտահայտված տոկոսներով* | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | *2016* | *2017* | *2018* | *2019* | *2020* | *2021* |
| *1* | *Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին* | *18* | *16* | *13* | *10* | *7* | *4* |
| *2* | *Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ* | *8.7* | *22* | *31* | *40* | *45* | *52* |
| *3* | *Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը համեմատած նախորդ տարվա հետ* | *0.5* | *1* | *1.5* | *2* | *2.4* | *3* |
| *4* | *Արտագաղթի նվազման տեմպերը* | *1* | *2* | *3.5* | *4.8* | *5.2* | *6* |
| *5* | *Աշխատատեղերի ավելացում համեմատած նախորդ տարվա հետ* | *1.5* | *2.5* | *4* | *5.6* | *7* | *9* |

## 4. ՀԶԾ ֆինանսավորում

*ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները՝*

- *Համայնքի սեփական եկամուտներ*
- *Ներքին պաշտոնական դրամաշնորհներ (սուբվենցիաներ)*
- *Բարեգործություններ, նվիրատվություններ*
- *ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ*
- *Միջազգային դոնոր կազմակերպություններ*

Արենի համայնքի ղեկավար՝ Ր. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. ՍԻՄՈՆՅԱՆ